ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման ծրագրի շրջանակում նախատեսում է ստեղծել վերապատրաստողների թիմ՝ անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգում ներգրավված մասնագետների շարունակական վերապատրաստումներն իրականացնելու նպատակով:

Վերապատրաստմանը հրավիրվում են մասնակցելու բժիշկներ և հարբժշկական մասնագետներ: *Մասնագետների ցանկը ներկայացվում է՝ այստեղ:*
Մասնակցության հայտ ներկայացրած մասնագետների հետ կանցկացվեն հարցազրույցներ, որոնց արդյունքում կընտրվեն 20 բժշկական և 20 հարբժշկական մասնագետներ, որոնք էլ կընդգրկվեն վերապատրաստվողների ռեեստրում:

Վերապատրաստումները տեղի կունենան 2 խմբով՝ **2021թ. հոկտեմբերի 18-ից 22-ը** (Խումբ 1) և **հոկտեմբերի 25-ից 29-ը** (Խումբ 2) Երևանում: Վերապատրաստման մոդուլները կլինեն տարբերակված՝ հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման (ՖՄԴ) և մշակված ուղեցույցերի հիման վրա՝ ըստ հաշմանդամության տեսակի և տարիքային խմբերի: Դասընթացները կվարեն Եվրոպական միության SOCIEUX+ բաղադրիչի փորձագետներ **Անդրեաս Կարիստինոսը** և **Գիագկոս Լավրանոսը**:
Վերապատրաստման ավարտին կտրամադրվեն մասնակցության հավաստագրեր և լավագույն մասնագետները կշարունակեն համագործակցությունը նախարարության հետ՝ ներգրավվելով բարեփոխումների հաջորդ փուլերի աշխատանքներում:
Գրանցման համար խնդրում ենք լրացնել ստորև ներկայացված ձևաչափը և ուղարկել hr@mlsa.am էլեկտրոնային հասցեին:

Դիմումներն ընդունվում են **մինչև 2021թ. հոկտեմբերի 4-ը, ժամը 13:00***:* Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ 010-52-28-51, 055-52-17-61:

Վերապատրաստումն իրականացվում է Եվրոպական միության SOCIEUX+ բաղադրիչի-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ:

Մասնագետների ցանկ

Բժիշկներ

- Օրթոպեդ-վնասվածքաբան
- Ակնաբույժ
- Սրտաբան
- Վերականգնողաբան
- Քիթ-կոկորդ-ականջաբան
- Նյարդավիրաբույժ
- Հոգեբույժ
- Վիրաբույժ
- Նյարդաբան
- Թերապևտ
- Մանկական օրթոպեդ-վնասվածքաբան
- Մանկական ակնաբույժ
- Մանկական սրտաբան
- Մանկական վերականգնողաբան
- Մանկական քիթ-կոկորդ-ականջաբան
- Մանկական նյարդավիրաբույժ
- Մանկական հոգեբույժ
- Մանկական վիրաբույժ

Հարբժշկական մասնագետներ

- Հոգեբան
- Կինեզոլոգ
- Էրգոթերապևտ
- Լոգոպեդ
- Տիֆլոմանկավարժ
- Մանկական հոգեբան
- Սուրդոմանկավարժ
- Օլիգոմանկավարժ
- Սոցիալական մանկավարժ

ՁԵՎԱՉԱՓ

1. **Ազգանուն, անուն, հայրանուն** _____
2. **Սեռը (արական/իգական)** _____
3. **Ծննդյան օրը, ամիսը, տարին**_____
4. **Կոնտակտային տվյալները** *(Բնակության հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե)* _____
5. **Կրթությունը**

Ուսումնական հաստատության(ների) անվանումը և վայրը ***(մուտքագրել միայն բարձրագույն կրթությունը)***	**Կրթական ծրագրի անվանումը**	**Մասնագիտացումը**	**Ընդունվելու և ավարտելու/հեռանալու տարեթիվը**

6. **Օտար լեզուների տիրապետումը**

Լեզուն	**Սկսնակ**	**Բավարար**	**Լավ**	**Գերազանց և/կամ մայրենի լեզու**

7. **Աշխատանքային փորձը և հմտությունները**

Կազմակերպության անվանումը	**Զբաղեցրած պաշտոնը**	**Ամիսը և տարին**		**Աշխատանքային պարտականությունները**
		Ընդունվելու	**Հեռանալու**	

8. **Համակարգչային/այլ հմտությունները**_____
9. **Ինչո՞ւ եք ցանկանում մասնակցել դասընթացին:**

_____

_____

10. **Ինչպե՞ս եք պատրաստվում կիրառել ձեռք բերված գիտելիքները հետագայում:**

_____

_____